# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ԻՄ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆՍ ՅԷՄՍ

Բանակռուութիւնն՝ նկատմամբ 1870ի փռանկ-գերմանական պատերազմին պատճառաց եւ սկզբնական պարագայից, դեռ եւս չէ լմնցած. մանաւանդ թէ վերջին ժամանակներս առաջինէն աւելի սաստկութեամբ յառաջ կը կը տարուի։ Բազմավիպին անցեալ տարւոյ դեկտեմբերի պրակին մէջ (էջ 555) հրատարակեցինք այս մասին յօդուած մը, յորում բաւ լուսաբանուած էր՝ Լէոպոլդ Հոհենցոլլէրն իշխանին Սպանիոյ գահոյն թեկնածութեան խնդիրն։ Այս անգամ եւս կը հրատարակենք նոյնպիսի յօդուած մը, որուն հեղինակն նոյն ինքն կոմսն Բենեդետտի լինելով, կը յուսանք որ ընթերցողաց հաճոյ եւ հետաքրքրական պիտի լինի։ Այս ականաւոր անձը, ինչպէս ծանօթ է ամենուն, նոյն ժամանակները գաղղիական դեսպանի պաշտօն կը վարէր ի Բերլին, եւ իւր կառավարութեանն պատուէր ընդունելով՝ գնաց յէմս, Գուլիէլմոս Առաջնոյն քով, Գաղղիոյ եւ Պրուսիոյ մէջ եղած խնդիրն խաղաղութեամբ վերջացնելու համար։ Ուշ դնելու է որ 1871ին, կոմսն Բենեդետտի հրատարակեց հետեւեալ խորագրով գիրք մը, «Իմ պատգամաւորութիւնս ի Պրուսիա», յորում ճշգրիտ տեղեկութիւն կու տար խնդրոյն ելից վրայ։ Դուքսն Գրամոն, որ 1870ին ի Պարիս արտաքին գործոց պաշտօնեայ էր, ուղղակի դատապարտանի կանչուելով, 1872ին պատասխանեց իւր գրքովը, «Գաղղիա եւ Պրուսիա՝ պատերազմէն առաջ», յորում կը պնդէր թէ ինքն հարկադրուեր էր այն պարագային մէջ նոյնպիսի դիրք մը բռնել. որովհետեւ Բենեդետտի կերպով մը իւր պաշտօնման մէջ թերի գտնուեր էր, վասն զի չէր կրցած Պրուսիոյ թագաւորէն մի քանի զիջումն ստանալ ի նպաստ Գաղղիոյ, եւ ինքն ինչ որ խնդրեր էր, առհասարակ ամենն ալ մերժուած էր։ Մօտերս՝ կոմսն Բենեդետտի «Հանդէս դիւանագիտական» անուամբ ուրիշ հատոր մի եւս հրատարակելու միտք ունի, զոր 1873ին գրեր էր ընդդէմ Գրամոն դքսին, բայց սորա մահը վրայ հասնելով՝ նոյն ատեն չէր հրատարակած։ Սոյն հատորէս ահա քաղուած է մեր այս յօդուածը։

Ես կը գտնուէի ի Վիլդբադ — կը գրէ կոմսն Բենեդետտի, — երբ հրաման ընդունեցայ մեկնելու յէմս, ուր հասայ յուլիս 8ին երեկոյեան դէմ։ Արտաքին գործոց նախարարին հրահանգներն հաղորդուած էին ինձ պաշտօնական հեռագրաւ մը, յորում յետ պարզելու այն պատճառներն՝ որոնք կը մղէին զԳաղղիա այս գործիս միջամտելու, կ'ըսուէր ինձ. «Այս խորհրդածութեամբք ներշնչուեցէք, զանոնք կարեւոր ցուցէք թագաւորին դիմաց, եւ ջանացէք համոզելու, որ ինքն խորհուրդ տայ Հոհենցոլլէրն իշխանին՝ յետս կոչելու իւր հաւանութիւնը»։ Այս հեռագրոյս հետ ստացայ նաեւ մասնաւորական նամակ մը, որով դուքսն Գրամոն կը յորդորէր զիս ընդունելու Պրուսիոյ թագաւորէն, որ հրամայէ Լէոպոլտ իշխանին՝ հրաժարելու Սպանիոյ գահէն։ Սակայն լաւ համարեցայ միայն պաշտօնական հեռագրոյն համեմատ գործել, եւ այնքան աւելի հաստատուեցայ այս մտաց վրայ, որքան կարեւոր չդատեցի բռնելու այնպիսի ընթացք մը՝ որ ստուգիւ թշնամական պիտի լինէր Պրուսիոյ թագաւորին, մանաւանդ յետ որոյ դուքսն Գրամոն՝ Գաղղիոյ խորհրդարանի յուլիս 6ի գումարման մէջ բուռն եւ սպառնական լեզու բանեցուցեր էր։ Գուլիէլմոս Ա նախ յայտնեց թէ ինքն ամենափոքր մասն եւս չունէր այն բանակցութեանց մէջ, որք տեղի ունեցեր էին մի միայն սպանիական կառավարութեան եւ Հոհենցոլլէրն իշխանազանց մէջ, եւ զիս ապահովցուց որ՝ եթէ Լէոպոլդ իշխանը յօժար երեւէր յետս կոչելու իւր ընդունելութիւնը, ինքն եւս իսկոյն պիտի հաւանէր այն որոշողութեան։

Երկրորդ ունկնդրութեան ատենն՝ որ ինձ շնորհուեցաւ յուլիսի 11ին, ջանացի վերջնական պատասխան մի ստանալ. բայց ի հեճուկս բովանդակ իմ ջանիցս, Պրուսիոյ թագաւորը միշտ ինձ կը յայտարարէր՝ որ ինքն չէր կրնար եւ չէր իսկ կամէր հրամայել Հոհենցոլլէրն իշխանին, յետս կոչելու իւր առ վարչութիւնն Սպանիոյ տուած խօսքըն. սակայն ինձ հասկացուց որ Հոհենցոլ-

digitised by A.R.A.R.@

լէոն իշխանը պէտք էր հրաժարիլ ինքնայօժարութեամբ իրեն ընծայուած թագէն, և ինքն իր կողմանէ պատրաստ էր հաւանելու անոր։ Դարձեալ յանձն կ՚առնուր ամենադոյզն ժամանակամիջոցի մէջ տալ ինձ վերջնական պատասխան մը. և յանձնարարեց ինձ նաև՝ այս իմաստով յանուն իւր հեռագրելու առ դուքսն Գրամոն։

Բացայայտ էր որ Պրուսիոյ թագաւորն այս կերպ վարմամբ՝ կ՚ուզէր արտաքին երեւութին չվնասել։ Ամենայն ոք գիտէր որ Հոհենցոլլէռն իշխանին որոշումը յօժարակամ պիտի ըլլար, և թէ ինքն ուրիշ բան պիտի չընէր՝ բայց հնազանդիլ իր վեհապետին կամաց։ Այսպէս ըմբռնեց և Գաղղիոյ վարչութիւնը. և յիրաւի, յ12 յուլիսի՝ դուքսն Գրամոն պատասխանելով իմ տեղեկագրոյս, կը շնորհէր սակաւ ժամանակամիջոցը զոր խնդրեր էր Գուլիէլմոս Ա. կը գովէր իմ ընթացքս, և առանց այլ ևս երկարելու խօսքն ոչ հրամանաց և ոչ խորհրդոց վրայ, զոր պէտք էր տար Պրուսիոյ թագաւորը, կը յորդորէր զիս հաւանելու որ Հոհենցոլլէռն իշխանին հրաժարումը պիտի ծանօթացնէր ինձ և հաղորդուէր՝ նոյն ինքն թագաւորէն և կամ իւր կառավարութենէն։

Անկից կը հետևի որ թէպէտ յ12 յուլիսի դեռ ևս ոչ ինչ վերջնականապէս որոշուած չէր, սակայն և այնպէս խնդրոյն լուծումը բարոյապէս իրողութիւն մ՚էր, զի նա ընդունելի եղած էր երկու կողմանց իսկ, և այլ ոչ ինչ կը մնար՝ բայց եթէ ընդունիլ Պրուսիոյ թագաւորին յայտարարութիւնը։ Եւ այս իրօք տեղի ունեցաւ որոշեալ ժամանակամիջոցին մէջ, և ըստ ամենայնի համաձայն եղաւ մեր ակնկալութեանց, այնպէս որ յ13 յուլիսի կրցայ հեռագրել առ դուքսն Գրամոն, հետևեալ կերպով. «Թագաւորն ընդունեցաւ Հոհենցոլլէռն իշխանին պատասխանը, որ եկած է ի կողմանէ Անտոն իշխանին. սա կը ծանուցանէ Նորին վեհափառութեան՝ որ իւր որդին Լէոպոլդ իշխանն հրաժարեր է իւր թեկնածութենէն ի գահն Սպանիոյ։ Թագաւորն հրաման կու տայ ինձ՝ իմացնելու կայսեր վարչութեան, որ ինքն կը հաւանի այս որոշման։ Թագաւորն յանձնարարած է իւր համհարզներէն միոյն, հաղորդելու ինձ այս լուրը, զոր բառ առ բառ կը հեռագրեմ քեզ»։

Սակայն այս միջոցիս կնճռալից խնդիր մը ծագեր էր։ Յուլիսի 12ին կէսօրէն վերջ պարոն Ոլոզագա, սպանիական դեսպան ի Պարիս, կ՚ընդունէր հեռագիր մը, յորում Անտոն Հոհենցոլլէռն իշխանը կ՚իմացնէր իրեն, որ իւր որդին յետս կոչեր էր թեկնածութիւնը։ Ոլոզագա փութաց հաղորդելու հեռագիրը Գրամոն դքսին, որ նոյն պահուն խօսակցութիւն մի կ՚ընէր պարոն Վերթերի հետ՝ պրուսիական դեսպանի ի Պարիս։ Հոս հարկ է դիտել նախ, որ հեռագիրն իշխանէ մի ղրկուած էր, որ ամենևին մասն չունէր Գաղղիոյ և Պրուսիոյ մէջ եղած բանակցութեանց մէջ. երկրորդ, որ հեռագիրը Բերլինի և կամ Մադրիդի խորհրդարանէն չէր եկած. և երրորդ, որ ոչ ոք զՈլոզագա պարտաւորեր էր դոյզն կերպիւ իսկ՝ հաղորդելու զայն գաղղիական կառավարութեան, այլ զայն իւր նախաձեռնութեամբ ըրած էր։ Ուստի այս հեռագիրն բոլորովին օտար էր Եմսի բանակիցներէն, և մեզ համար պաշտօնապէս չկար այն ի միջի. այս կարծիքէն էր նաև Նապոլէոն Գ., որ նոյն իրիկունը կը գրէր առ դուքսն Գրամոն. «Անտոն իշխանին առ Պրիմ ուղղեալ հեռագիրն[1], մեզ համար պաշտօնական լուր մի չէ, զոր ոչ ոք յանձն առած է հաղորդելու մեզ։ Մինչև որ չընդունինք պաշտօնական տեղեկութիւն մի յԵմսէ, պէտք է համարիլ որ պատասխան չենք ընդունած մեր արդար պահանջմանց»։

Եթէ դուքսն Գրամոն ևս այս կարծիքէն ըլլար, ուրիշ բան պիտի չընէր՝ բայց եթէ սպասել Պրուսիոյ թագաւորին պատասխանին, զոր անպատճառ պիտի ընդունէր յաջորդ օրն, և Գաղղիա լիուլի պիտի ունենար իւր խնդրած գոհունակութիւնը։ Նա կ՚ըսէ իւր վերյիշեալ գրոց մէջ, թէ «խորհրդարանն և ընդհանուր Գաղղիա մեծապէս յուզուած էին, լսելով որ հրաժարման լուրն եկած էր ուղղակի Անտոն իշխանէն, և ոչ թէ ի Պրուսիոյ. այլ այս յուզման պատճառն կը պարզուի, երբ մտածենք՝ որ թէ խորհրդարանը և թէ ժողովուրդը ոչ ինչ գիտէին Եմսի բանակցողաց մասին։ Եւ բնական էր այս պարագայից մէջ, որ երեսփոխան մը, Տիւվէռնուա, մէջտեղ ելնէր՝ վարչութենէն պատասխան պահանջելու համար, թէպէտ և շատ քաղաքագէտ անձինք, յորս և Ոլիվիէ և Թիէր, կը կարծէին՝ թէ այն հեռագրաւ այլ ևս խաղաղութիւնն յապահովելի էր։ Ընդհանուր գայրացման պատճառն այս էր, որ ամենայն ոք կը կարծէր թէ Անտոն իշխանէն առ դեսպանն Սպանիոյ ուղղեալ տեղեկութիւնն միակ գոհունակութիւն էր՝ զոր Պրուսիա կը շնորհէր Գաղղիոյ։ Այլ բնական էր որ արտաքին գործոց պաշտօնեայն ծա-

---

1. Այս հեռագիրն էր իրօք այն պատասխանը՝ զոր Անտոն իշխանը կու տար առ Պրիմ ի ձեռն Ոլոզագայի։

digitised by A.R.A.R.@

նօթացնէր խորհրդարանին՝ Էմսին բանակցութիւնն, և ահա զայրոյթը կը խաղաղէր։

Ընդհակառակն ի՞նչ կ'ընէ դուքսն Գրամոն։ Չայգիւ թէ հեռագրալուրը կը բերէ և կ'իմացնայ Տիւլըրեանային մեկնութիւն պահանջելն, յառաջ տանելով Պ. Վերթէրի հետ սկսած խօսակցութիւնը, կ'ազդարարէ իրեն՝ որ գաղղիական կառավարութիւնը կ'ուզէ որ Պրուսիոյ Թագաւորը գրէ նամակ մի առ կայսրն Գաղղիոյ, որոյ ծրագիրն ինքն նոյն վայրկենին հետևեալ կերպով կը համառօտէ. «Թագաւորն՝ հրաման տալով Լէոպոլդ Հոհենցոլլեան իշխանին՝ ընդունելու Սպանիոյ թագը, չէր կարծեր վնասել գաղղիական ազգին շահուց և արժանապատուութեան։ Նորին վեհափառութիւնը կը հաւանի Հոհենցոլլեան իշխանին հրաժարման, և կը յայտնէ փափաքն՝ որ փարատի կասկածք և իրեն կառավարութեան մէջ եղած ամենայն պատճառք թիւրիմացութեան»։

Պ. Վերթէր չուզ կամս հարկադրեալ հաղորդելու առ իւր վեհապետն՝ գաղղիական կառավարութեան այս փափաքն, և դուքսն Գրամոն անմիջապէս յետոյ գնաց ի Սէն-Կլու՝ (Saint-Cloud) կայսեր հետ բանակցելու համար։ Դուքսն չի յայտնեց մեզ՝ թէ ինչ կարծիք ունեցաւ կայսրն այս միջադէպին վրայ, բայց դիւրին է գուշակել զայն՝ երեկոյեան ժամը 7ին իրեն առ իս հեռագրած հրահանգէն. «Ստացանք Սպանիոյ դեսպանին կողմանէ Անտոն իշխանին՝ յանուն իւր որդւոյն հրաժարումը ի թիկնածութենէ այս վերջնոյ՝ առ գահն Սպանիոյ, որպէս զի այս հրաժարումը իւր ամէն ազդեցութիւնքն ունենայ, պատշաճ կը թուի՝ որ Պրուսիոյ Թագաւորն հաւանի ընդ այն, և մեզ տայ երաշխաւորութիւն՝ որ ապագային մէջ ևս կրկին պիտի չվաւերացնէ այդ թիկնածութիւնը։ Հաճեցէք երթալ առ Թագաւորն և խնդրել իրմէ այս յայտարարութիւնքն...»։

Այսպէս ես անտեղեակ կը մնայի Պ. Վերթէրի եղած առաջարկութեան, և այս վերջնոյս՝ զայն իւր վեհապետին հաղորդելու խոստմանը. Սակայն դուքսն Գրամոն պէտք էր գուշակել՝ որ յաջորդ օրն, երբ Թագաւորն ընդունած պիտի լինէր իւր Պարիսու ներկայացուցչին տեղեկագիրն, ես տարօրինակ դրից մէջ պիտի գտնուէի, ընելով իրեն պահանջք մը շատ տարբեր անկէց՝ որ առանց իմ գիտութեանս, իրեն կ'առաջարկուէր ի ձեռն Պ. Վերթէրի։ Ուստի կարելի է ենթադրել՝ որ կայսրն ի հարկէ մերժեց իրեն արտաքին գործոց պաշտօնէին այս հնարքը, համարելով զայն դէմընդդէմ հակառակ Պրուսիոյ Թագաւորին արժանապատուութեան։

Ցիրաւի՝ երկու առաջարկութեանց տարբերութիւնն մեծ էր. հարկ չէր ինձ պահանջել Թագաւորէն ոչ նամակ և ոչ արդարացուցումն իւր նախընթաց վարմանց, այլ հարկ էր ինձ խնդրել իրմէ միայն բերանացի յայտարարութիւն մը, որ զմեզ ապահովէ ընդդէմ Հոհենցոլլեան իշխանին վերստին թիկնածութեան։

Դուքսն Գրամոն կ'ըսէ, թէ յետ հասնելու Անտոն իշխանին հեռագրալուրը, դէմ առ դէմ հասարակաց կարծեաց և երեսփոխանաց մեծամասնութեան ցուցած կերպին, «կարելի չէր ընդունիլ զհրաժարումն առանց երաշխաւորութեանց դաշն դնելու»։ Այս երաշխաւորութիւններն ամենևին հարկաւոր չէին, զի ստուգիւ անկարելի էր ենթադրել որ Պրուսիոյ Թագաւորն, յետ մի անգամ ազատելու այնպիսի կնճռալից և անտարոյց վիճակ մը՝ առաւելութեամբ իւր հեղինակութեան, փափաքէր դարձեալ մխիլ յայն։

Եւ ահա կը հասնի յուլիս 13, որ նախընթաց աւուր գործողութեանց վերջ կը տայ և կը բառնայ ամենայն յոյս ի խաղաղասիրաց։

Նոյն օրուան առաւօտը, Թագաւորէն ունկնդրութիւն մի ընդունելով, ըսի իրեն՝ թէ ի Պարիս ամենուն ծանօթ էր Լէոպոլդ Հոհենցոլլեան իշխանին հրաժարումը։ Կարգէ դուրս զարմանալ կեղծեց այս բանին վրայ, թէպէտ և չէր յուսար ինձ հաւատալի ընել, որ ինքն անտեղեակ էր՝ Անտոն իշխանին առ Ոլոզագա ուղղեալ հեռագրոյն, և կամ՝ որ նա հեռագրած լինէր նախ ի Պարիս քան թէ յԷմս։

Անուրանալի է որ Թագաւորը կը ջանար զարմանակել մինչև յետին ծայր կեղծաւորութեան, որպէս զի՝ Գաղղիոյ վտանգաւոր զիջումն մի ըրած ըլլալու պատասխանատուութենէն ազատի. և մանաւանդ թէ կը ջանար միշտ կարող լինել հաստատելու՝ որ ինքն ըստ ամենայնի յարգած է այժմ, ինչպէս նաև յառաջագոյն, իւր ազգականաց ազատութիւնը։ Ուստի երբ թախանձեցի իրեն որ Գրամոն դքսին խնդրած յայտարարութիւնն ընէ, նա զայն բացարձակապէս մերժեց, ըսելով, թէ կը ցաւէր որ անկարող էր ընելու մեզ «նոր և անակնկալ զիջումն մի»։

Եւ որովհետև ինձ կրկին խոստացած էր, որ նոյն օրը զիս պիտի կոչէր իմացնելու համար տեղեկութիւնքը զոր նախընթաց օրը ծանուցեր էր ինձ, միտքս դրի աւելի նոր փորձ մ'ալ փորձել՝ զինքն այն առաջարկութենէն ետ կեցնելու համար, բայց դէպք այլազգ յանգեցին։ Թագաւորը փոխանակ զիս կոչելու առ ինքն, իրեն Ռաձ-

digitised by A.R.A.R.@

վիլ համհարգին ձեռօք իմացուց ինձ յայտարարութիւնը, որ սակայն բոլորովին համաձայն էր իւր խոստման հետ. այնպէս որ ժամը 3,45ին կրցայ ղրկել տր. դուքսն Գրամոն վերոյիշեալ հեռագիրն։

Ինչո՞ւ Պրուսիոյ թագաւորը փոխանակ գիս կոչել տալու, ինձ պատասխանեց իւր համհարգին ձեռօք։ Պատճառն յայտնի է։ «Նոր և անակնկալ գիջումն» զոր նոյն առաւօտ խնդրած էի իրմէ, ոտգոհացուցեր էր զինքը. և երբ՝ ինձ հետ բանակցելէն քիչ յետոյ, ընդունեցաւ Պարիզէն Պ. Վերթերին տեղեկագիրն, և տեսաւ որ դուքսն Գրամոն կը պահանջէր մի այլ մեծագոյն գիջումն, գիջումն մի զոր նա իմ կողմանէս կ'անգիտանայի և չէի կրնար նա տանուլ, այնատեն յետ ղրկելով ինձ վերոյիշեալ տեղեկագիրն, որոշեց այլ ևս չդառնալ նոյն պատճառաբանութեանց վրայ. և իրօք, երբ նոր ունկնդրութիւն մի խնդրեցի, իմացուց ինձ որ չէր հաճէր դարձեալ վիճաբանել խնդրոյ մը վրայ, որ ինքն վերջացած կը համարէր։ Քիչ վերջ Գուլիէլմոս Ա. հեռագրաւ մի տեղեկացուց Բիզմարքի նոյն օրուան դէպքերն, և այս եղաւ Եմսի նշանաւոր հեռագիրն, զոր մեծ սենեկապետն յայտնապէս այլափոխելով՝ հրատարակեց Գերման հասարակութեան, այսու՝ պատերազմն անխուսափելի ընելով։ Ուշ դնելու է որ ց13 յուլիսի Բիզմարք իշխանը ամենևին չէր մասնակցած Եմսի բանակցութեանց, և թէ Գրամոն դքսին յետին անգամ՝ ըրած պահանջմունք այնպէս ըրին՝ որ Պրուսիոյ թագաւորը հարկ համարեցաւ կոչելու զինքն ի միջամտութիւն, և սա կրցաւ յարմար առթիւ մղել զԳաղղիա ի պատերազմ։

Ընդհակառակն, եթէ գաղղիական կառավարութիւնը նոյն իր նախընթացաբար սկըսած ճամբուն մէջ յառաջէր, եթէ առ ոչինչ գրելով Անտոն իշխանին հեռագրալուրը, սպասէր որ Բրուսիոյ թագաւորին շնորհուած ժամանակամիջոցն լրանար, սա պիտի ընէր ինձ — ինչպէս իրօք ըրաւ — յայտարարութիւնը, զոր ես պիտի հաղորդէի — ինչպէս իրօք հաղորդեցի — ի Պարիս, և Գաղղիա պիտի ունենար լի և կատարեալ գոհունակութիւն։ Սերեմն, եթէ ենթադրութեամբ, յապաւենք յետին ժամու միջադէպքը, ինչ կը մնայ մեզ։ Կը մնայ այն՝ զոր դուքսն Գրամոն բացարձակապէս մերժեր է. այսինքն, որ ես կատարեր էի լիուլի յաջողութեամբ ինձ յանձնուած պատգամաւորութիւնը։

ԱՂՕԹՔ ՄԱՆԿԱՆ

Հայր մեր երկնից, Տէ՛ր ամենայն աշխարհի,
Դու ես միայն խնամող մանկանցս մանրիկ,
'Ի այնքան բարեաց կամիս թէ, շնորհս հատուցել
Եւ խնդրեսցես սեռն հաստատել անկեղծիկ՝
Որոց այնքան կարօտին։
Զամենայն ինչ եւտուր ինձ՝ կեանս և լոյս,
Զգործեան 'ի հօգւ զծաղիկս բերանոյ իմ աչաց,
Ըզհայր և զմայր և զմնասանս եղկերայս,
Առ քեզ միայն ուղղեմ զաղօթս իմ, Աստուա՛ծ,
Յաւատոտուց և յերեկս։

Տէ՛ր երկնաւոր, ըզմանկութիւնս քո՛ օրհնեա՛,
Պահեա իմ և փառք իմոց 'ի գուծս աղերսեմ,
Երջանկութիւն նոցա՝ հանձայց ինձ շնորհեա՛.
Իցի՛ւ ողջևանլի նոցին հոլուր՝ միշտ լիցեն
Քեզ ի նոցա սիրելիք։

Տիկին Տասթու

Թրգ. Մ. Ալեմշահեան